Աշխատանքային տարբերակ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) միջազգայնացման սույն հայեցակարգի (այսուհետ՝ Հայեցակարգ) իրավական հիմքը կազմում են Համալսարանի կանոնադրությունը, «2023-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը», Էրազմուս+ «Համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարքետինգի խթանումը Հայաստանում»-BOOST ծրագրի շրջանակներում մշակված «ՀՀ բարձրագույն կրթության միջազգայնացման ռազմավարությունը», ինչպես նաև այլ ներքին իրավական ակտեր:

ՇՊՀ առաքելության իրականացման համար մշակվել է մարքեթինգային ռազմավարություն, որի նպատակն է բարձրացնել և ամրապնդել համալսարանի վարկանիշը՝ որպես տարածաշրջանում (մասնավորապես՝ Շիրակի մարզ, Ջավախք) ուսումնագիտական, մարզամշակութային կարիքների բավարարմանն ուղղված, փոփոխվող արտաքին միջավայրի և ՀՀ աշխատաշուկայի պահանջներին համահունչ կրթական ծրագրեր, գիտահետազոտական և մարզամշակութային գործունեություն իրականացնող կազմակերպություն:

Մարքեթինգային գործունեությունը ծավալելիս ՇՊՀ-ն հաշվի է առել արտաքին և ներքին շահառուներին՝

- Դիմորդներ
- Ուսանողներ
- Դասախոսներ
- Համալսարանի այլ աշխատակիցներ
- Ծնողներ
- Ունկնդիրներ
- Կազմակերպություններ՝ առևտրային և ոչ առևտրային(հայկական և

արտասահմանյան)

- ԿԳՄՍ նախարարություն և կրթության առնչվող այլ հաստատություններ:

ՇՊՀ-ն առանձնացրել է մարքեթինգային ռազմավարության հետևյալ նպատակները՝

- **ՇՊՀ վարկանիշի բարձրացում,**
- **Ներքին և արտաքին շահառուների հետ հաղորդակցության միջոցների բարելավում,**
- **Մարքեթինգային գործիքների բարելավում և ներդրում:**

ՆՊԱՏԱԿ *1.* ՇՊՀ վարկանիշի բարձրացման համար կարևորել ՇՊՀ կրթական, գիտահետազոտական գործունեության, միջազգային տեսանելիության, ՇՊՀ բրենդի, նորարարությունների բարելավումը:

Կրթական գործունեության բարելավման համար ՇՊՀ-ն իր առջև դրել է հետևյալ խնդիրները՝

- Պարբերաբար հավաքագրել կրթական գործընթացի արդյունավետության վերաբերյալ ուսանողների, շրջանավարտների և գործատուների շարունակական արձագանքները,
- Ուսումնասիրել և վերլուծել տեսական նյութի, գործնական աշխատանքների և պրակտիկայի կապը և համապատասխանելիությունը ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին,
- Ապահահովել կրթական վերջնարդյունքների ապահովման համար ուսանողների կողմից ընտրովի առարկաների առկայությունը,
- Պարբերաբար լրամշակել և համապատասխանեցնել մասնագիտական կրթական ծրագրերն աշխատաշուկայի պահանջներին,
- Ընդլայնել գործատուների հետ համագործակցությունը:
- Ուսումնասիրել կրթական շուկայի կարիքները, մասնավորապես Շիրակի մարզում:
- Ուսումնասիրել ՇՊՀ-ի դիմորդների ընդհանուր բնութագրերը՝ կրթական հաստատություն, բնակության վայր, նախասիրություն, տարիք, սեռ:
- Բենչմարքինգի իրականացման նպատակով ուսումնասիրել այլ համալսարանների փորձը:
- Ուսումնասիրել կրթական գործընթացի ռիսկերը, մշակել դրանց գնահատման և կառավարման գործիքակազմը:

Գիտահետազոտական գործունեության բարելավման համար ՇՊՀ-ն իր առջև դրել է հետևյալ խնդիրները՝

- Խրախուսել ՇՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական գործունեությունը,
- Գիտահետազոտական գործունեության լուսաբանումը ՇՊՀ կայքէջում և այլ հաղորդակցման ցանցերում,
- Իրականացնել ամենամյա ներբուհական դրամաշնորհային մրցույթ,
- Իրականացնել այլ համալսարանների հետ համատեղ վերապատրաստումներ և առցանց դասընթացներ,
- Կազմակերպել տարբեր մասնագիտությունների գծով դասախոսների ակադմիական շարժունություն և փոխանակում,
- Կազմակերպել գործընկեր համալսարանների հետ գիտաժողովներ, քննարկումներ՝ որպես փորձի փոխանակում,
- Պաշտոնական կայքէջում և սոցիալական ցանցերում լուսաբանել բաց դասերը և գիտական սեմինարները:
- Հրավիրյալ դասախոսներին առաջարկել գիտական սեմինարներ անցկացնել իրենց մասնագիտության շրջանակում:

Միջազգային տեսանելիությունը բարձրացնելու համար ՇՊՀ-ն իր առջև դրել է հետևյալ խնդիրները՝

- Մշակել օտարալեզու ՄԿԾ-ի մասնագիր կամ դասընթացների առարկայական նկարագրեր,
- Վերապատրաստել դասախոսներին՝ օտարալեզու ՄԿԾ կամ առանձին դասընթացներ իրականացնելու համար,
- Ապահովել ակադեմիական շարժունության մասնակիցների քանակի շարունակական ավելացումը,
- Մասնակցել միջազգային կրթական տոնավաճառ-ցուցահանդեսներին,
- Մշակել կրկնակի դիպլոմ ստանալու հնարավորությունը:
- Բենչմարքինգի անցկացման արդյունքում բարելավել բուհի գործունեության հիմնական ոլորտների աշխատանքները:
- Ուսումնասիրել համալսարանի միջազգայնացման ուղղությունների համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը:

- Ընդլայնել այլ բուհերի հետ համագործակցության շրջանակը, մասնավորապես՝ համատեղ դրամաշնորհային ծրագրերի, հետազոտությունների և ԿԾ–ների իրականացման ոլորտներում:
- Ապահովել բուհի ներգրավվածությունը վարկանիշավորման տարբեր համակարգերում:

Բրենդի համար ՇՊՀ-ն իր առջև դրել է հետևյալ խնդիրները՝

- Ապահովել ԶԼՄ-ների ներկայությունը ՇՊՀ-ի կողմից կազմակերպված միջոցառումներին,
- Ապահովել համացանցում համալսարանական միջոցառումների առցանց հեռարձակումները,
- Սոցիալական ցանցերում պարբերաբար տեղադրել ՇՊՀ-ի գործունեության մասին հոդվածներ,
- Կազմակերպել առցանց դասընթացներ հայերեն և օտար լեզուներով,
- Զարգացնել և ընդլայնել կրթական ծառայություններն արտասահմանցի ուսանողների համար,
- Կազմակերպել նախապատրաստական դասընթացներ դիմորդների համար,
- Ներգրավել ուսանողներին, շրջանավարտներին և դասախոսներին համալսարանի բրենդի ձևավորման աշխատանքներին,
- Ընդլայնել դպրոցների հետ համագործակցությունը,
- Խրախուսել լավագույն ուսանողներին:

Նորարարությունների համար ՇՊՀ-ն իր առջև դրել է հետևյալ խնդիրները՝

- Ընդլայնել տեխնիկապես կահավորված լսարանների քանակը,
- Կազմակերպել դասընթացներ նոր տեխնոլոգիաներով,
- Խարխուսել նորարարական գիտահետազոտական գործունեություն իրականացնելը ուսանողների և դասախոսների շրջանակում,
- Բարելավել բուհ-գործատու կապը ՇՊՀ-ի ներսում՝ վերջիներիս ներգրավելով ուսումնական և հետազոտական գործընթացներում

ՆՊԱՏԱԿ *2.* Ներքին և արտաքին շահառուների հետ հաղորդակցության միջոցների բարելավում

Ներքին և արտաքին շահառուների հետ հաղորդակցության ուղիների բարելավման համար ՇՊՀ-ն իր առջև դրել է հետևյալ խնդիրները՝

- Ստեղծել ուսանողների և շրջանավարտների տվյալների բազա,
- Ստեղծել դպրոցների, քոլեջների տվյալների բազա,
- Ստեղծել առաջին կուրսի ուսանողների համար ուղեցույց,
- Ներդնել մենթորության գաղափարն ուսանողական կյանքում, որը թույլ կտա բարձր կուրսի ուսանողներին իրենց գիտելիքները փոխանցել ցածր կուրսի ուսանողներին
- Ընդլայնել մշակութային, սպորտային և հասարակական բնույթի միջոցառումները համալսարանում,
- Կազմակերպել պարբերաբար դպրոցական օլիմպիադաներ,
- Կազմակերպել մասնագիտական կողմնորոշման դասընթացներ,
- Կազմակերպել դիմորդների և այլ շահառուների համար բաց դռների օր,
- Մասնակցել պարբերաբար կրթական տոնավաճառ-ցուցահանդեսներին,
- Կազմակերպել դասընթացներ դիմորդների համար,
- Ներկայացնել համալսարանի կրթական ծրագրերը դպրոցներում,
- Կազմակերպել բաց դասեր և քննարկումներ հանրակրթական դպրոցների աշխատակազմի և աշակերտների համար:

ՆՊԱՏԱԿ *3.* Մարքեթինգային գործիքների բարելավում և ներդրում

Մարքեթինգային գործիքների բարելավման և ներդրման համար ՇՊՀ-ն իր առջև դրել է հետևյալ խնդիրները՝

- Կազմակերպել ներքին և արտաքին գովազդային արշավներ,
- Պատրաստել օտարալեզու գովազդային և տեղեկատվական հոլովակներ օտարազգի շահառուների համար, մասնավորապես համագործակցող համալսարանների, կազմակերպությունների և ուսանողների համար
- Ստեղծել գործատուների բազա և պարբերաբար աշխատանքի առաջարկներ ուղարկել ուսանողներին և շրջանավարտներին,
- Ներդնել և գովազդել հեռահար ուսուցումը, որոշակի կրթական ծրագրերի հիման

վրա

- Պաշտոնական կայքէջում, սոցիալական ցանցերում և ԶԼՄ-ներում պարբերաբար տեղադրել գովազդային տեղեկատվական նյութեր,
- Կազմակերպել պարբերբար կորպարատիվ միջոցառումներ,
- Պատրաստել իմիջային ստենդներ,
- Ստեղծել առցանց համալսարանական ամսաթերթ,
- Ստեղծել հայերեն և օտարալեզու բուկլետներ և համալսանում սովորելու ուղեցույցներ,
- Ստեղծել համալսարանի բրենդի բարձրացման համար հուշանվերներ,
- Շարունակաբար ընդլայնել և թարմացնել պաշտոնական կայքէջում տեղադրվող նյութերը՝ հայերեն և օտարլեզուներով,
- Ներգրավել ուսանող կամավորներ, ովքեր կաջակցեն թարմացնել ՇՊՀ-ի կայքէջում տեղադրված ռուսերենով և անգլերենով տեղեկատվությունները, ինչպես նաև նրանց տալ տեղեկանք, որը թույլ կտա ապագայում, որպես առվելություն ներկայացնել ուսանողների վարկանիշավորման մրցույթին մասնակցելու դեպքում,
- Կիրառել թվային մարքեթինգի առանձահատկությունները,
- Պարբերաբար մամլո ասուլիսով ներկայանան ռեկտորը, պրոռեկտորները, դեկանները և ամբիոնի վարիչները և դրանք տեղադրվեն YouTube էջում և պաշտոնական կայքէջում, որի ընթացքում նրանք կներկայացնեն համալսարանում իրենց ղեկավարած ստորաբաժանման ընթացիկ գործունեությունը և նոր ձեռքբերումները: